

Եղիա մարզարա, էս չէնլիկ ա, քարերին, խարարա աշ-
խարհին առւ:

Եւ եթէ չի լուսմ, Ս. Սարգսի փոխնդից պահածը փշում
են դուրս բղաւելով. Ս. Սարգսիս, դու բարեխօս ոյլիս Եղիա
մարզարէին, որ մեր որդիկերանց աշխատանքը մեզ զըսմաթ
անի:

Եւ եթէ չի կարւում, նոյն փոխինդը խառնում են տեառ-
նընդառաջին վառած խարսիկի մոխիրի ու աղի հետ և շաղ
են տալիս դէպի վերե:

Եւ կամ տարեմտի գրիւթուկիս խանձողն են դուրս ձգում:

Եւ եթէ սրանը էլ չեն օգնում, գութանի խոփը հակառակ
կողմով դուրս են ձգում, որպէսզի Սոտծուն բաղրէ, թէ վա-
րել եմ, տանջուել, ինչի Եղիա մարզարէն փշացնում է իմ
աշխատանքը:

Կարիւտից զիւլացիները չափազանց վախենում են,
ուստի և զատկից մինչեւ վարդավառ ամէն երկուշարթի կիրա-
կի են պահում, Խուսաց Պրիվոլոյէ զիւլի մօտ զանուած ծօ-
լու-բար (կարկտի հայր) ուխտատեղին հասարակական մատաղ-
ներ ուղարկում, որպէսզի կարկուտ չը զայ և եթէ չի օգնում
կարկտի զիր են անել տալիս:

Ջամնն մի պատաւ կին է, որ փշում է և երբ զիւլացիների
թեղի ժամանակ ցանկացած կողմից չի փշում, հայոյում են,
ասելով. Քաւթառ պառաւ, քո հէրն անիծած, էս կռնից փշի
էլի:

ՈԴԻՆԵՐԻ ՊԱՀՑԱՄՄՈՒՆՔ

Ա.

ԲԱՐԻ ՈԴԻՆԵՐ

Հըեշտակներ՝ բարի եւ շաբ.—Երկու տեսակ հըեշտակ-
ներ կան՝ բարի և շաբ: Երկուսն էլ թեաւոր են, միմեանց
նման, միայն բարին՝ սպիտակ է, բազմերանգ թերով, իսկ
շաբը՝ սև:

Սրանք միշտ միմեանց հետ կռւում են, ծննդկանի, հի-

ւանդի աջ կողմը՝ բարի, ձախ կողմը շար հրեշտակը կանգնած միմեանց հետ վիճում, կռւսում են՝ և ով յաղթանակում է, նա է տիրապետում որանց հոգուն:

Պահապան հրեշտակ.—Ըմեն մի երեխայ ունի պահապան բարի հրեշտակ, որ մի ամբողջ տարի խնամում է նրան, զուր տալիս, եղունգները կտրում, իւր ձեռի խնձորով զրադեցնում, ծիծաղեցնում նրան, նա թեները բաց կանգնած է լինում երեխայի մնարի մօտ և կամ առաստաղում, որտեղից անդու հսկում է նրա վրայ:

Եւ այս է պատճառը, որ մի ամբողջ տարի երեխային զուր չեն տալիս և ոչ էլ եղունգները կտրում:

Մինոյն ժամանակ երեխայի ձեռքում միս շեն դնում, որովհետեւ նրա մատները մօմի պէս լոյս է տալիս, եթէ միս բռնեն, այդ լոյսը կը խաւարի:

Հացի հրեշտակ.—Փողովուրդը հաւատում է, թէ կան հացի հրեշտակներ, որոնք կանգնում են թռնիքի շուրթը, երբ հաց են թխում, ուստի հնց որ կամենում են հաց թխել, խաշակնում են, երբեմն էլ խունի ծխում, ձգելով խոնկը թռնիք թռնիք մէջ:

Ցան-զովլաթ.—Մի մեծ զերդաստանից մի հարս բաժանում է, իւր համար առանձնանում, շետեհալ առաւոտք զերդաստանի հայրն առաւօտ շատ վաղ, երբ բոլորը զեռ քրնած են լինում, վեր է կենում, տեսնում է, որ թարմ ձիւնի վրայ մնացած հետքից երեսում է, որ մինը տանից հեռացել է, բայց չի վերպարձել: Նայում տեսնում է, որ անեցիներից ոչ ոք չէ զուրս գնացել: Նայում է բաժանուած հարսի գուանը, տեսնում է, որ ոչ մի հետք չկայ, բռնում է իւր տան զուն հետքը և գնում: Մի քիչ գնալուց յետոյ պատահում է մի մարդու, որին բարեկարգ յետոյ հարցնում է թէ ով է:

—Ես ձեր տան գովլամին են, պատասխանում է այդ մարդը, ես այն հարսի ճակտին էի նստած, որ երէկ բաժանուց ձեզանից: Հետը զնալ չուփեցի, որովհետեւ փոքրիկ տուն է, ձեզ մօտ մնալ էլ շարժէ, ուստի և հեռանում եմ:

Գերդաստանի հայրը սկսում է խնդրել, պադատել, որ վերպառնայ տուն, սակայն գովլաթը չի համաձայնում, մին-

չե որ զերդաստանի հայրը խոստանում է հաշտուել բաժանուած հարսի հետ և նրան կրկին իր մօտն առնել.

Տաւարի-դովլաթ.—Ուզունլար մի զիշեր մի հարս իւր սկիսրոջ հետ միասին տանը առանց տղամարդի մնալով դրանքը կտպաւմ են և կրակի տառաջ լուռ ու մունջ նստում։ Մէկ էլ յանկարձ դռնից մինը բարակ ձայնով կանչել է, որ դուռը բանան։ Հարսը գուրս է եկել և տեսել մի սաստիկ մազոտ մարդ՝ կանդած։ Հարցնում է, թէ ով ես. Թէ մի մարդ եմ, էկի, եկել եմ. Հարսը վախեցած ներս է քաշում, մարդն էլ նրա յետեխց զնում և օջախի մօտ նստում է. բերում նրա առաջ հաց են զնում, սա սկսում է ուտել։ Ուտում է ուտում, բայց հացը շի պակասում։ Մարդը անխօս սրբում է բերանը և յետ նստում։ Այս ժամանակ սկսուրը վերցնում է ճրադը և հարսի հետ գնում են օդան, որ այդ մարդու համար անկողին պատրաստեն՝ քնի։ Այս մարդն էլ սրանց հետեւում է, հարսը անկողինը ձգում է, մէկ էլ յետ են նայում որ մարդ շկայ։ Նոր են հասկանում, որ սա տաւարի զովլաթն է եղել։

Դոմաթ.—Սոզոմոն իմաստունը մի նախիրի մօտից. անցնելիս ասում է, թէ այս ինչ կողի սրովայնի հորթի ճակատը ծաղկաւոր (դաշղա) է։ Նախրապանը պատասխանում է թէ չէ, պոշն է ծաղկաւոր, որ զրել է ճակատին, այդպէս է երեւում։ Սոզոմոնը մորթել է տալիս կողը և տեսնելով, որ նախրապանի ասածն էր ճիշտ, հարցնում է, թէ ինչի՞ այդքան իմաստուն տեղովը նախրապան է մնացել. նա էլ պատասխանել է, թէ իմ զմամթո է այսպէս. իմ ծննդեան ժամանակ իմ զմամթի զոշը (խոյ) ոտքը տարել պոզերն է քերել, դրա համար էլ ես չոր չորացել եմ, այն ինչ քո ժամանակը՝ դըմակն է քերել։

Բ.

ԶԱՐ ՈՒԽԵՐ.

Սաստանամեր.—Արանց զլխաւորը համարւում է Բելիարը, որի որդին կոչւում է Սաթիել, իսկ աղջիկը՝ նարմազուշիկ։ Սրանց մասին պատմում են.